# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 171-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով նախագիծը՝ որոշում եմ.

1.Երկարաձգել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, 2 ա հասցեում գտնվող, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շենքի վերանորոգման աշխատանքների շինարարության թույլտվության ժամկետը: 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 172-Ա

## «ՔԵՖՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով, նախագիծը որոշում եմ՝

1.Տրամադրել շինարարության թույլտվություն, թույլատրել կատարելու համայնք Ալավերդի. գյուղ Հաղպատ, 14-րդ փողոց, 19 հասցեում գտնվող, «ՔԵՖՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող տարածքի էլեկտրամատակարարման աշխատանքները:

2.Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:

3.Ալավերդի համայնքի ավագանու 26.12.2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 132-Ն որոշման համաձայն «ՔԵՖՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ից գանձել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի 24
ք. Ալավերդի